

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Վ Ա Ր Ա Գ

Տեղ.Ա.Կ.Բ.Ա.Կ.Ա.Ն. — Վան քաղաքի առևտրական կողմը, երկու ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Վարազ լեռը, որուն վրայ կառուցուած է Վարազայ Ս. Նշան վանքը, և ունի այլ և այլ ժամանակներու մէջ իրարու կից շինուած եօթ եկեղեցիներ, որոնք են, Ս. Գէորգ, որուն մէջ կը գրտնուին Սենեքերիմ Թագաւորի (Ֆ 1026) և Գետաղտրմ Պետրոս կաթողիկոսի (Ֆ 1058) գերեզմանները, Ս. Աստուածածին, Ս. Նշան, Ս. Խաչ (= Գետարգել Ս. Նշան), Ս. Սրնն, Ս. Յովհաննէս (= Քառասուն Արեղայից) և Ս. Սոփիա. — Լ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 256-8. Ե. Հայտայեան, Վասպ. Նշ. Վանքեր, էջ 41-60.

ՊԱՏՄԱԿԱՆ. — Խորենացիի վերագրուած Ս. Հռիփսիմեանց Պատմութեան համաձայն, կոյսերը հոս կ'ապաստանին ժամանակ մը և իրենց քով գտնուող Ս. Խաչի մասունքը կը պահեն շիրան վրայ փոքր խրճիթի մը մէջ, Լեբան ծերպերուն մէջ կ'ապրէին նաև ճգնաւոր քահանաները Այդ ճգնաւորներուն ամենէն անուանին կը կոչուէր Ուրբաթայրք (Խոր. Մատ. էջ 302): Կ'երեւի թէ Գ. գարէն սկսեալ Վարագի վրայ շարունակուեցաւ մենակեացներու ճգնութիւնը, որոնցմէ կը յիշուին Խրեք զխաւորներ 1. Տեղ Աւուղիակ խոստովութեան, անոր աշակերտը և յաջորդը Զ. Տեղ Փիլիպպոս, ապա 3. Տեղ Միքէ, 4. Տեղ Սեւփանոս, 5. Տեղ Բողաս, 6. Տեղ Մուսեղիկ, 7. Տեղ Ներսուս, և 8. Տեղ Թողիկ (Հայպ. էջ 232):

Հռիփսիմեանց կողմէ պահուած մասունքը կը ձեռք առնայտ մինչև է. գարու կէսը, երբ, Ներսէս Գ. Շինող կաթողիկոսի օրով, ըստ Օրմանեանի 660-1 թուականներուն (Ազգպ. յօդ. 498) կը յայտնուի Թողիկ ճգնաւորին, և համբուը կը լսուի ամբողջ Հայաստանի մէջ, և ամէն կողմէ ուխտի կողգանն Ս. Նշանին (Հայպ. էջ 229-31): Ներսէս Հայրապետ իրողութիւնը

ստուգելէ վերջ Վարագայ Խաչին Երեւան յիշատակին տարեկան տօն մը կը սահմանէ (Ազգպ. յօդ. 498): Այս առթիւ բազմաթիւ եկեղեցիներ կը շինուին շիրան վրայ և կրօնաւորներու համար կը հաստատուի և կ'ընդարձակուի Վարագայ մենաստանը (Ինճ., Ստոր. Զին Հայս, էջ 191):

Տեղ Թողիկին կը յաջորդեն նախ իր աշակերտը Գ. Տեղ Յովիկ, ապա 10. Տեղ Սրեմիա և ապա 11. Տանաս, որ այս տեղեկութիւնները գրի առած է (Հայպ. էջ 231-2): Թերեւս սոյն Տանասն է որ գրած է Ս. Աստուածայեաց վկայարանութիւնը (Հ. Գպր. էջ 569):

Թ. գարու կիսուն կը յիշուի 12. Գրեգոր Վանահայր, զոր բռնած և բանտարկած էին Ամիւրկ բերդին իշխող Աւթմանիկ կոչուած տաճրիկները, որոնց ձեռքէն ազատուեցաւ շնորհիւ Աշոտ իշխանին. — Թ. Արծրունի, էջ 214:

Ժ. գարու սկիզբը — 912 — Մլքէ Թագուհի Վարագայ վանքին կը նուիրէ իր Թանկագին Աւետարանը. — Զարգանկարք Աւետարանի Մլքէ Թագուհու, Վենետիկ, 1902, էջ 8:

Ժ. գարու կիսուն (946 թ.) Վարագի առաջնորդ եղած է 13. Անանիա Մոկացի, որ ապա ընտրուեցաւ կաթողիկոս. — Աստղիկ, էջ 157:

Նոյն գարուն վերջերը Սենեքերիմ Թագաւոր (990-1026) կը շինէ Վարագայ հուշակայ և հուշակաւոր մենաստանը և կը յանձնէ հաւատարիմ կրօնաւորներու. — Թ. Արծրունի, էջ 307:

Այդ ժամանակներուն 14. Ասովմ Վանահայր Վարագայ, կաթողաւորութեանց նոր հաւաքում մը կը կազմէ և կը գտաւորէ հառաւորական ամիսներու օրերուն համաձայն, որ այդ պատճառաւ կը կոչուի Հոռոմագիր, կամ հեղինակին անունով Առոմագիր. — Ալիշան, Շնորհալի, էջ 31: Օրմ. Ազգպ. յօդ. 673:

Փ. Կ. գարուն սկիզբը (1024) Աշոտ Բագրատունի կը շինէ Ս. Նշանին համար Թանկագին պահարան մը 30000 գահեկանով. — Ռուհ. էջ 9: Սամ. էջ 105-6:

Այս գարու կիսուն Գր. Մագիստրոս նամակ մը կը գրէ — Թ. ԿԹ. — Վարագայ վանահայր սրբազանին, ընդդէմ խոզարձութեան. — Հրատ. Կ. Կոստանեանց, էջ 146-7:

Նոյն զարուհ վերջերը Վարագի վանա-
կայն էր 15. Տե՛ր Պօղոս (1085-մ. 1093),
զոր Փրկառուտ կը կաննէ և կաթողիկոս
ձեռնադրել կուտայ Սարաշի մէջ, Բայջ
Պօղոս քիչ յետոյ կը թողու աթոռը և կը
հեռանայ, ու կը վախճանի Լիզնիսոյ մէջ,
ուր գացած էր Վարագայ Ս. Սուրբ վերա-
զարմնելու. — Ուռհ. էջ 275 և 295:

ԺԳ. զարէն սկսեալ աւելի ճշգրիտ
թուականներով պատմական յիշատակա-
թիւններ կը յաճախեն Վարագայ վանքի
վանահայրերուն մասին, որոնք մինևնոյն
ատեն վանի ալ առաջնորդները եղած են
առհասարակ:

16. Ղուկաս Վանահայր, որ 1231ին
Վարագայ ինչը կը փայտցնէ Նորաբերդ,
Վասակ իշխանին մօտ, ազատելու համար
Քորալմաններէն որոնք նուաճած էին Սը-
լաթի շրջանը. — Ջալալեան, քննպ. Ա.
էջ 160-1:

17. Պետրոս Առաջնորդ, * 1303ին. —
Ե. Լ. Նշ. Վանքեր, էջ 46-7:

18. Յովհաննէս Վարդապետ, 1304ին,
կուռած այժմ իմաստասէր. — Թրգմ. էջ
413:

19. Տե՛ր Սարգիս ևս Տե՛ր Պետրոս սևա-
մաշունչ եղբայրներն, 1310ին. — Թրգմ.
էջ 196:

Տէր Պետրոս եպիսկոպոսի օրով, 1318ին,
Թաթարները կը կողոպտեն վանքը. — Նշ.
Վանքեր, էջ 54: Աղգ. Հանդ. ԺԲ. էջ 163:

20. Պաղոս Առաջնորդ. — Թ. Աղ-
բար, Բ. էջ 429:

21. Տե՛ր Սահակ Առաջնորդ, Նախոր-
դին եղբայրը, 1393-9. — Թ. Աղբար, Բ.
էջ 429: Նօտարք, էջ 3 ձեթ. 4: Հանդ.
Ամս. 1917-8, էջ 55 ձեթ. 1:

22. Մարգարէ Վարդապետ, աշակերտ
Գր. Տաթևացոյ, 1421: Իր օրով կը յիշ-
ուի նաև Ասով վարդապետ օրմաստասէր
փրկիտօփան. — Նօտարք, էջ 65, 67-8:

23. Յովհաննէս Արքեպիսկոպոս, 1421
-67. — 1441ին նամակով մասնակցած է
Էջմիածնի ժողովին որ կաթողիկոս ընտրեց
Կիրակոս Վերապետին. — Մեծոփ. Յիշում.
Ա: Նօտարք, էջ 65-7, 106, 146, 154,
175, 231-2: Առ. Դաւր. էջ 418:

24. Ասով Վարդապետ, 1501-7, փի-
լիսոփայ և աստուածաբան: Իր օրով Ջա-
քարիս երգիչը ներքող մը կը գրէ Վարագի

մասին. — Կոն. էջ 107. Նշ. Վանքեր էջ 54:
25. Կարապետ Արքեպիսկոպոս, 1536ին.
— Արարատ, 1919, էջ 14 (41):

26. Մարգար Պարոնեհ Օղիսկոպոս, որ
աշակերտութիւն մը կազմած է Վարագի
մէջ: Իր ձեռնասուշնեքէն կը յիշուին Ջա-
քարիս փրկիտօփայ, Կարապետ Նպս. Ա-
բարքեցի, կուռած Ջամալ, և Յովհաննէս
Իրզուտեցի վարդապետները. — Աղգպ. էջ
2261:

27. Սեփանոս Արքեպիսկոպոս, 1591
-1602. — Յ. Ջեռ. Վասպ. էջ 719: Դի-
ւան Ժ. էջ Լ.:

28. Ջաֆարիս Նպս. Վանեցի, 1606-
8. — Հանդ. Ամս. 1911 էջ 66:

29. Մարտիրոս Արքեպիսկոպոս, 1615.
— Նշ. Վանքեր էջ 55: Սրոն 1927 էջ 246:

ՃԶ. զարուհ վերջերը և ԺԷ. Ին սկիզ-
բը Վարագի մէջ կ'ուսուցանէր Կարապետ
Վրդ. Ջագ, որուն մօտ կ'աշակերտի Պօղոս
Վրդ. Մոկացի և կ'ըլլայ Նշանաւոր քարո-
զիչ. կը վախճանի Սիւնեաց Մեծ Անապա-
տին մէջ 1620 թուին. — Առ. Դաւր. Գլխ.
ԽԳ.:

30. Կիրակոս Վարդապետ, 1648-9.
— Վանի մեծ երկրաշարժին, որ տեղի ու-
նեցած է 1648 Ապրիլ 2ին, ուրիշ շատ չէն-
քերու կարգին փլած են նաև Վերին Վա-
րագ և Ներքին Վարագ և Ս. Թորիկ Հօր
եկեղեցին: Այդ ժամանակ Նշանաւոր էր
Խօջայ Ռուհիբեան որ Սուլթանէն հրաման
կը ստանայ վանքերու և եկեղեցիներու նօ-
րոգութեան: Վարագայ վանքի եկեղեցի-
ներուն շինութիւնը յանձն կ'ուսանն զանա-
զան երեսելիներ և Գիրակոս վարդապետ.
— Առ. Դաւր. Գլխ. ԼԷ.:

Այս վերաշինութենէն քիչ յետոյ, 1651
ին, Խօջար բերդի տէրը բռնաւոր Սիւլէյ-
ման բէկ և իր ընկերը արիւնարբու Ջօմար
կը կողոպտեն վանքը, տանելով ինչ որ
արժէքաւոր էր, ի միջի ալլոց Ս. Նշանը
և բազմաթիւ սպիտակ և արծաթապատ
աւետարաններ և ուրիշ գրքեր. — Առ.
Դաւր. Գլխ. ԼԸ.:

Սրեք տարի յետոյ Ս. Նշանը կը յանձ-
նուի Հայոց և կը զետեղուի Վան քաղաքի
Ս. Տիրամօր եկեղեցին. — Առ. Դաւր. Գլխ.
ՌԲ.:

31. Պօղոս Վարդապետ, 1654. — Նշ.
Վանքեր էջ 56: Ջամբա, Գլխ. ԺԱ, էջ 94:

32. Յովհաննէս Վրդ. Քիւրիւնցի, 1669, որ նորոգել տուած է Վերին Վարազէն ներքին Վարազ իջնող ջրանցքը. — Նշ. Վանքեր, էջ 56: Հանդ. Ամս. 1920 էջ 29: Դիւան Ժ. էջ 105:

33. Յովազար Վրդ. Ղափանցի. — Նշ. Վանքեր էջ 56:

34. Կարապետ Վրդ. Կալոյ, փիլիսոփայ և աստուածաբան, 1679—մ. 1697 Յնվր. 27: Սա ամէն կերպով ճոխացուցած է վանքը, և զոնացուցած եկող գացող բազմաթիւ այցելուներ. — Նշ. Վանքեր էջ 48 և 56: Դիւան Ժ. էջ 17: Նոյն էջ 116, 153:

35. Ասեփանոս Վարդապետ Մոկացի, 1697—1715, որ 18 տարի անուանական վանահայրութիւն է բրած, և վանքը անխնամ թողուցած է. այնպէս որ քաղաքին իշխանները և վանքին սովորել են որ նախորդ վանահոր ժողոված ամբողջ գոյքերը վաճառելի վերջ, «չուն և կատուն ևս» ծախած և սուրբ ուխտը անմարդաբնակ ամայի դարձուցած են. — Նշ. Վանքեր էջ 56: Դիւան Ժ. էջ 116, 154:

36. Բարդուղիմէոս Նպս. Շուտանցի, 1711—24, աշակերտ Կարապետ Վրդ. Կալայի: Սա 1721ին վերանորոգած է վանքը. — Նշ. Վանքեր էջ 47—8 և 57: Դիւան Ժ. էջ 128, 155:

37. Յովհաննէս Վարդապետ. — Նշ. Վանքեր էջ 57:

38. Սամուէլ Վարդապետ. — Նոյն, անդ:

39. Գրիգոր Նպս. ձուհուկանց, 1747—մ. 1769 Նոյմ. 6. — Նոյն անդ: Դիւան Ժ. էջ 141:

40. Բաղդասար Արեւիպոկոպոս, 1775—79. — Սա նկարներով զարդարած է Վարազայ վանքի զարդաստանը և սիւնները. — Անաս. Յ. Անո. Թարգիզի էջ 18: Վասպ. Նշ. Վանքեր, էջ 57:

41. Յարութիւն Նպս. Բաղիբեցի, 1801. — Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Զ. էջ 142: 1806 Օգոստոս 9ին Վարազայ վանքը (= եօթ եկեղեցիներու վանքը) կ'այցելէ Պ. Ա. Ժորբեր Ֆրանսացիին և հոն կը տեսնէ աշատ ոսկերչական գործեր և հայերի նկարած քառական յովող պատկերներ. — Ուղեգրութիւններ, Զ. էջ 236:

42. Գալուստ Նպս. Վանցի, * 1820. — Վերանորոգած է Վարազայ Ս. Սաչ եկեղեցին, ուր գտնուած է Դետարգել Ս.

Նշանը, 1817ին ւորոգած է նաև Մարաշուքեան բնակարանները. — Նշ. Վանքեր էջ 49 և 57:

43. Սարգիս Վրդ. Պարթիպայի, որուն խնդրանքով Յունեան քահանայ Վանահեղեցի գրած է Վարազայ Սաչ ներքողական Պատմութիւնը, սպուած Մոսկուա. — Նոյն, էջ 57:

44. Ղազար Վրդ. Բեկիրցի, 1833—36. — Սա նորոգել տուած է Վարազայ վանքին պարիսպը. — Նոյն, էջ 51 և 58:

45. Պետրոս Արեւայա. Կուրապայի. — Նոյն էջ 58:

46. Մկրտիչ Վրդ. Խրիմեան, 1856—58—84. — Արիփեան 1857ին Վարազայ վանքին մէջ հիմնած է ապարան, հրատարակած է թերթ «Արուսի Վասպուրական» և բացած է Ժառանգաւորաց դպրոց, ուրիշ դուրս եկած են նշանաւոր վարդապետներ, ինչպէս Գ. Սրուանձտեան, Արսէն Թոխմարեան, Գր. Աղուանեան, Արիստակէս Տեւկանց և Ղեւոնդ Փիրիլալեմեան. Ժառ. դպրոցը 1880ին վերածուած է Երկրագործական վարժարանի. — Նոյն էջ 59: Դիւան Ժ. էջ 57: Վարազն ալ իր կարգին կոտորածի և կողոպուտի ենթարկուած է 1896ին. — Նշ. Վանքեր, էջ 59:

47. Վրթմէս Վարդապետ, 1901. — Զիւ. Նշիչէ Նպս., Յիշատակներ, էջ 105—6:

Առաջին Համաշխարհային պատերազմին (1915) Վարազայ վանքն ալ կ'ենթարկուի աւերումի և կողոպուտի, քայքայութեամբ ձեռագրերն են թաքստոցը կը մնայ ծածկուած՝ կողոպտորէներու աշխէն (Արարատ, 1915, էջ 863—4): Վարազի ձեռագրերն են թիւը այս դարու սկիզբը կը հաշուուէր 278. — Նշ. Վանքեր, էջ 49:

ՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ. — Վարազայ վանքը անուշտ սենեկած է մշակութային կարեւոր աշխատանք: Մեզի ծանօթ գործերը սակայն քաղաքի չեն և ոչ ալ այնքան հին: Անուանելի ինչ որ քաղած ենք մեզի մատչելի սեղող աղբիւրներէ:

Ա. — Յակոբ Կոնաւոր, Գրիչ, 1318ին օրինակած է Թուղթ Պաւլոսի եւ Մարգարէութիւն Նախայ. — Այգ. Հանդ. ԺԲ. էջ 163—4: Հանդ. Ամս. 1917—8 էջ 44—6:

Բ. — Մովսէս Վրդ. Մեծոփայ Վանաց. 1355ին Վարազի մէջ օրինակած է Սողմո-

նի Առակաց ևայլն գրքերը. — Սարգ. թ. 8, էջ 95-6:

Գ. — Յովհաննէս Գրիչ, 1399ին օրինակած է ձառընթիւ մը, մեծապիւր, երկու հատոր. — Թ. Աղաբար, Բ. էջ 429:

Դ. — Սաղաթէլ Աբեղայ, 1421ին օրինակած է Աստուածատունը մը. — Կար. թ. 178:

Ե. — Մարգարէ Արծիշեցի, 1536ին օրինակած է Պատմ. Ալեքսանդրի, զոր նկարագրողած է կիսով չափ Գրիգորիս Աթամարցիի Ձեռն. Ս. Յ. Թ. 473. — Արարատ, 1919, էջ 11. Խաղբ. Ա. էջ 244:

Զ. — Յովհաննէս Կրօնաւոր, 1559ին օրինակած է Աւետարան մը. — Ամբաստանց, Գեղարքունի, էջ 397:

Է. — Բարսեղ Աթղ. Վարազեցի, Գրիչ, 1591-1602, որդի Ասեփանսի, քերթողի և աշակերտ Կարապետ բարունակատ Ջամալի և Տէր Յովհաննէս քարտուղարի: Օրինակած է,

1. Աւետարան, 1591ին, ստացող պր. Հայրապետ. — Յ. Ձեռն. Վասպ. թ. 302: Դրւան Ժ. էջ 33:

2. Շարակնոց, 1595ին. — F. Mac. Notices, p. 149-164:

3. Ոսկեփորիկ, 1602ին. մէկ մասը ինքը գրած է, մնացեալը՝ Տէր Աւետիս Մոկացին, Վանի մէջ. — Դրւան, Ժ. էջ 1:

Ը. — Սահակ Աբեղայ, Գրիչ, 1664-9. — Օրինակած է Սաղմուսարան մը 1664ին. — Յ. Ձեռն. Վասպ. թ. 19: Նորոգած է Աւետարան մը 1649ին. — Արցախ, էջ 274:

Թ. — Գրիգոր Դպիր Վարազեցի, 1684ին օրինակած է Յայրմուտեմ մը զստապ Շարխօշի խնդրանքով. — Դրւան, Ժ. էջ 1Կ-1Դ.:

Ժ. — Յովհաննէս Գրիչ, 1772ին օրինակած է Մեկն. Պոկկի ճակկապաց Սիմէոն Սպա.ի Գառնոյ. — Կար. թ. 1816:

ԺԱ. — Գէորգ Վրդ. Նաղաշ, 1775ին օրինակած է Մեկն. ԺԲ. Մարգարեից Ն. Լամբրոնացւոյ. — Անճառ., Յ. Ձեռն. Թաւրիզի, էջ 17:

Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ

ԼԵՂՈՒՆԳՐԻՏՅԱԿՆԵ

ՀԱՅՅԵՐԷՆԻ ԲԱՐԲԱՆԵՐԸ(*)



4. Շամախի բարբառ. — Այս բարբառը խօսուում է գլխաւորապէս Շամախի քաղաքում. և նրան մօտիկ մի քանի գիւղերում՝ մինչև Ղուբա: Մնացեալ գիւղերը Ղարաբաղի, Սոյի և Սալմաստի գաղթականներ լինելով՝ պահում են իրենց մայրենի բարբառը: Շամախեցիների մի ստուար գաղութ էլ կայ Բաղուում: Բարբառս շատ կէտերով նման է Ղարաբաղի բարբառին. գլխաւոր տարբերութիւնները հետեւեալներն են. ըէ և իյ ձայները չկան այսանդ. ընդհակառակը առատորէն կայ Ֆ, որ պակասում է Ղարաբաղում. շնշար գիւրջավանկի վրայ է, մինչդեռ Ղարաբաղ, Երեւան ևայլն վերջներին վանկի վրայ է. — ը ձայնը յաճախ գառնում է ի. ինչպէս այնչէրի, միտիզ անիլ, վիզի՛գիս, ին՛քի ևն. — աւ գառնում է օ, օ ձայնաւորներից առաջ օ, հօ, ինչպէս սոօօտ, հարկօօր, կնքօօր, շնօօր, տանգէշօօր. — բացառականը թէէն Ղարաբաղի բարբառի նման ստանում է ան, բայց գործիականը առնում է օվ. ինչպէս ցէքա՛ն, ցէքօ՛վ. — դերանունները ստանում են յաճախ աւելորդ իկ մասնիկը. որ մինչև երբ անգամ կարող է կրկնուել. ինչպէս տիւ, տիւիզ, տիւիզիթ, տիւիզիզիթ, տիւիզիզիզիթ, յէս, յէսիզ, յէսիզիս, յէսիզիզիս, յէսիզիզիզիս, նա, Ֆարիզ, նարիզիզ, նրանքիզի, նրանքիզիզիզի ևն. — էական բայի ձայնաւորը անգականի մօտ դառնում է ա. անցողականի մասնիկն է ցուկիլ. երկուսի համար իբրև օրինակ՝ հասացուաբ բւմ, հասացուաբ էս: հասացուաբ էս, հասացուաբ անը, հասացուաբ անը, հասացուաբ անը:

Այս բարբառը աւտուձնախորուած չէրբօ. բայց կան մի խումբ բոլորածընեի նոյն բարբառով: ինչպէս Արէլիանի և Գէօգալ Աղաբաջու երգիծական գրուած քերբը:

(*) Եւրամակարիմ՝ մեծանուն հիդրանի Պատմութիւն Հայ Լեզուի գրածէն (ԽԻ. Գլուխ):